

նեկ, և զամենային անգործ աղքատս և զորս ինմա ժողովներ, և ըստ այնմ վերակացուա կարգել:

Եֆ.

Նման սմին հարկաւորի ինձ գրել եւ կանոնս ոմանս վասն կառավարութեան համակարանին, այսինքն վարժարանին, որ է դպրատուն . բայց մինչ այժմ ոչ զոյ այն. երբ Աստուծոյ սղորմութիւնն քաղցրացուցէ զսիրտ Կայսերական Մեծութեանն, որ վասն այնորիկ եւ ոռամիկս սահմանեցեն, յայնժամ երէ եղէց կենդանի, ըստ կարգի եւ ըստ պարտաւորութեան մերոյ՝ սահմանեց եմ զամենայն, վասն բարոք կառավարութեան նորին եւ հաստատութեան, եւ իւրաքանչիւրոց գործն, վարժապետին եւ վարժեցն յատկացուցանելոց, յորոց պարտին յառաջ զայ այսունետես բոլոր եկեղեցականքն: Եսկ երէ հանդիպի մեզ ման՝ ըստ հոսանուա բնութեանս մարդկան, եւ կամ լինել այլ ուրեք՝ ըստ փոփոխ բնութեանս մերոյ, յայնժամ հարկ եւ պարտաւորութիւն է այնմ Սրբազն Սրբեալիս կուպոսին որ զինի մեր յաջորդէ, որ զմերոյնշանակեալսն լրացուցէ, եւ նոզս կատարեալս տարցէ իւրոյ ածել զամենայն անկատար եւ խաւար նոզիսն, իւրոյ զիտութեան,

որով փառաւորի Աստուած, պայծառապէս պանծայ Սուրբ Արոռն մեր եւ եկեղեցիքն, բարեկարգի նոզեւոր եւ մարմնաւոր դատարանքն, եւ մողովուրդքն ժամանակին լինին երանելիք, որք տեսանեն զորդիս իւրեանց յառաջադեմ զնալոյ զօրութենէ իզօրութիւն, զենէկութենէ իշագնուականութիւնն. որ չիք իր ինչ պատուականազոյն իշաշխարհի քան զիմաստութիւնն, որպէս յայտ առնէ Սողոմոն. Ես Դաւիթ անյառք փիլիսոփայն մեր, եւ ննազոյն նեղինակքն իմաստութեամբ, եւ ներկայիս փորձն, որ մեծամեծ բազաւորք իմաստութեամբ յայնացուցանեն զնայինիս, ստանան զանոն մշտնշենական, եւ բողոքն զերջանկութիւն ստորադրելոցն: Հակառակ սմին, որք գուրկք են իմաստութենէ, զունեցեալ իշխանութիւնն կորուսին եւ կորուսանեն: Եւ նոյն ինքն Սրբազն Սրբեալիսկոպոսն որ զայս տնօրինէ, ինի պարտաւոր բիւր բարեաց մողովորեանն, որպէս նախնի բարգմանիքքն ազգիս մերոյ, զորոց վիպէ պատմաբանն Մովսէս քերրողն Խորենացի:

Նուսաստ Յովսէի Արքեսիցիսկոպոս Ռուսաց երկրի ամենայի Հայոց ազգին, եւ Հիմնադիր նորաշեցիս:

### Ա. Բ. Ա. Կ.

Ա.ՔԱՂ.Ա.Գ. ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ.

**Ա.Քաղաղին-մէկն աղբիւսը քըրքըրած ատեն  
ինչպէս եղաւ՝ մարգըրիտ մը գըտաւ մէջէն.**

**Դառնայ ինչ ըսէ աղէկ.**

**«Հը, ինչ փուճ բան, նայեցէք.**

**Մարգիկ որքան անխելք են**

**Որ սըւոր մեծ գին կըդընեն:**

**Ինծի համար, կուղէք ըսեմ ճըշմարիտը.**

**Հատ մը գարին լաւ է քան զայս մարգըրիտը:**

**Իրաւ, գարին տեսօք չէ,**

**Բայց փոր կըկըշացընէ»:**

**Ա.Հա այսպէս է ընդհանուր**

**Տըգէտ մարգոցը գատաստան,**

**Ո՞ր բանէն որ համ չեն ասնուր՝**

**Իրենց համար է անպիտան:**

**Քունը ԱՊ.**